ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2026 թվականի N 1262 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 2093-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 15-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը հաստատելու և ցանկում ընդգրկված դպրոցների համար սահմանված շինարարական աշխատանքների՝ կառուցման, վերակառուցման կամ հիմնանորոգման համար միջամտության աստիճանի ընտրության չափորոշիչները սահմանելու մասին» N 2093-Ն որոշման՝

1) N 2 հավելվածի «Եզրահանգումներ» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև կրթության բովանդակությանը, ժամանակակից նորմերին ու պահանջներին համապատասխան կրթական հաստատությունների նոր շենքային պայմաններ ունենալու հրամայականը՝ խիստ նպատակահարմար է դիտարկվում նոր շենքերի նախագծման ու կառուցման մոտեցման կիրառումը: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ շենքերի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար:

Ծրագրի իրականացման նպատակով հանրակրթական ուսումնական հաստատություններում պարբերաբար իրականացվում են ուսումնասիրություններ՝ շենքերի տեխնիկական վիճակը և սեյսմիկ խոցելիության մակարդակը պարզելու նպատակով: Նշված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ մի շարք ուսումնական հաստատություններ ունեն հիմնանորոգման կամ նորոգման կարիք: Ընդ որում՝ միջամտություն չի նախատեսվում անել այն դեպքերում, երբ մասնագիտացված կազմակերպության կողմից տրամադրված սեյսմիկ եզրակացության հիման վրա նշված շենքը գնահատվում է որպես վթարային կամ սեյսմիկ առումով խոցելիության բարձր մակարդակ ունեցող: Այսինքն՝ ուսումնասիրված բոլոր այն դեպքերում, երբ մասնագիտական եզրակացությամբ շենքի տեխնիկական վիճակը գնահատված կլինի առնվազն բավարար և կպահանջվի սեյսմազինվածության բարձրացում, սակայն ելնելով դպրոցի բնականոն շահագործման և դասապրոցեսի անխափան կազմակերպման պահանջներից, ինչպես նաև հետագա քայքայումից պահպանելու համար այս դպրոցներում որպես ժամանակավոր լուծում անհրաժեշտ է իրականացնել վերանորոգման անհետաձգելի միջոցառումներ:

Նշված միջամտությունների իրականացման, միջամտության տեսակի ընտրության նպատակով յուրաքանչյուր դպրոցում իրականացվում է կարիքների գնահատում՝ հիմնված հետևյալ բաղադրիչների վրա՝

1. տանիք, ինչպես նաև հովհարների տեղադրում և փոխարինում՝ ներառյալ ջերմամեկուսիչ շերտի, տանիքի կոնստրուկցիաների ամրությունը, հակահրդեհային և հակակոռոզիոն շերտերի առկայությունը, ծածկի մաշվածության մակարդակի գնահատումը և դրա բաղկացուցիչ մասերի առկայությունը,

2. դռներ՝ ներառյալ դրանց մաշվածության աստիճանի գնահատումը, փականների առկայությունը, ֆունկցիոնալությունը և գործող նորմերին համապատասխանության գնահատումը,

3. պատուհաններ, ներքին և արտաքին պատուհանագոգեր՝ ներառյալ դրանց մաշվածության աստիճանի գնահատումը, փականների և բարդ փականների առկայությունը, ապակիների և ապակեփաթեթների վնասվածության աստիճանը,

4. հատակ՝ ներառյալ հատակի կառուցման համար օգտագործված նյութերը և մաշվածության աստիճանի գնահատումը,

5. ջերմազազամատակարարման և օդափոխության համակարգեր՝ ներառյալ կաթսայատան, կաթսաների, ջերմուղու, խողովակների և ջեռուցման մարտկոցների վնասվածության աստիճանը, ֆունկցիոնալությունը և գործող նորմերին համապատասխանության գնահատումը, ինչպես նաև դրանց ժամանակակից նյութերով պատրաստված լինելու հանգամանքը,

6. ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր, սանհանգույցներ՝ ներառյալ սալիկների, կախովի առաստաղների վնասվածության գնահատումը, սանիտարական սարքերի առկայությունը, դրանց ֆունկցիոնալությունը, ինչպես նաև հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված սանհանգույցների առկայությունը, կոյուղու մաքրման կայանների և դիտահորերի տեղադրման անհրաժեշտությունը և համապատասխան տարածքի առկայությունը,

7. ներքին հարդարում, կոնստրուկցիաների պահպանման տեղային միջոցառումներ՝ ներառյալ օգտագործված նյութերը և մաշվածության աստիճանը,

8. արտաքին և ներքին էլեկտրական համակարգերի, արևային կայանների ամբողջական կամ մասնակի փոխարինում, այդ թվում՝ էլեկտրահաղորդման գծերի ֆունկցիոնալությունը և օգտագործված նյութերը, առկա տրանսֆորմատորային ենթակայանների հզորությունը և ֆունկցիոնալությունը,

9. կապի համակարգերի ամբողջական կամ մասնակի փոխարինում,

10. հակահրդեհային համակարգերի ամբողջական կամ մասնակի փոխարինում,

11. նախակրթարան՝ ներառյալ դրանց բացակայության պարագայում կառուցման հնարավորության գնահատումը,

12. շենքերի և շինությունների երեսպատման աշխատանքների ամբողջական կամ մասնակի իրականացում, այդ թվում՝ հենապատեր, մարզադահլիճներ, հանդիսությունների դահլիճներ և ճաշարաններ՝ ներառյալ դրանց մաշվածությունը և հագեցվածության գնահատումը, ինչպես նաև դրանց բացակայության պարագայում նորի կառուցման հնարավորությունը,

13. գույքային հագեցվածություն՝ ներառյալ դասասենյակների, լաբորատոր սենյակների, մարզական, հանդիսությունների դահլիճի, ճաշարանի, բուժկետի և վարչական մասի համար նախատեսված գույքը,

14. արտաքին տեսք և տարածքի բարեկարգում՝ ներառյալ շենքի/շենքերի մուտքերի և ելքերի հագեցվածությունը, այդ թվում՝ թեքահարթակների և ծածկի առկայությունը, սալվածքի առկայությունը և մաշվածության աստիճանը, արտաքին տեսքի համար օգտագործված նյութերի տեսակը և դրանց մաշվածության աստիճանը, ջրահեռացման խողովակների առկայությունը, տարածքի բարեկարգման անհրաժեշտությունը, ցանկապատի առկայությունը և դրա մաշվածության աստիճանի գնահատումը, մարզադաշտի, խաղադաշտի առկայությունը,

15. կոնստրուկցիաների պահպանման համար լուծում պահանջող անհետաձգելի տեղային վերականգնում՝ ելնելով բնականոն շահագործումից,

16. շենքերը պարփակող/պատող կոնստրուկցիաների ջրամեկուսացում, անհրաժեշտության դեպքում՝ դրենաժային համակարգերի իրականացում:

Վերանորոգման/հիմնանորոգման համար ընտրված և N 3 հավելվածի համաձայն հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր դպրոցի համար իրականացված կարիքների գնահատման արդյունքում արձանագրված, ստորև սահմանված քաղաքաշինական միջամտություններին համապատասխանող և պատվիրատուի հետ

համաձայնեցված վերանորոգման/հիմնանորոգման աշխատանքները համարվում են շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներ:

Այն դպրոցներում, որտեղ իրականացվում է նորոգում, կարող են նախատեսվել նաև անհրաժեշտ բացակայող ենթակառուցվածքների, մասնավորապես՝ մարզադահլիճի, հանդիսությունների դահլիճի կամ մանկապարտեզի (նախակրթարանի) մասնաշենքի կառուցման նախագծային լուծումներ՝ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով:

Սույն պարբերությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքները ներառում են քաղաքաշինական միջամտության հետևյալ աստիճանները՝

1. տանիքի ամբողջական կամ մասնակի փոխարինում, ինչպես նաև հովհարների տեղադրում և փոխարինում,

2. դռների ամբողջական կամ մասնակի փոխարինում,

3. պատուհանների ամբողջական կամ մասնակի փոխարինում,

4. հատակների ամբողջական կամ մասնակի փոխարինում,

5. ջերմագազամատակարարման և օդափոխության համակարգերի ամբողջական կամ մասնակի փոխարինում, կաթսայատան վերազինում, վերականգնում,

6. արտաքին և ներքին ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ամբողջական կամ մասնակի փոխարինում, այդ թվում՝ կոյուղու մաքրման կայանի և դիտահորի տեղադրում,

7. արտաքին և ներքին էլեկտրական համակարգերի ամբողջական կամ մասնակի փոխարինում, այդ թվում՝ արևային կայանների տեղադրում,

8. կապի համակարգերի ամբողջական կամ մասնակի փոխարինում,

9. հակահրդեհային համակարգերի ամբողջական կամ մասնակի փոխարինում,

10. շենքերի և շինությունների երեսպատման աշխատանքների ամբողջական կամ մասնակի իրականացում, այդ թվում՝ գոյություն ունեցող հենապատերի,

խաղադաշտերի, մարզադահլիճների, հանդիսությունների դահլիճների, ճաշարանների, թեքահարթակների, սալվածքների, ցանկապատերի և մարզադաշտերի մասով,

11. շենքերի միջնորմների և պարփակող արտաքին պատերի մասնակի քանդում,

12. կոնստրուկցիաների պահպանման, քայքայման կանխարգելման ժամանակավոր լուծում պահանջող անհետաձգելի տեղային վերականգնման աշխատանքներ՝ ելնելով բնականոն շահագործման և դասապրոցեսի անխափան կազմակերպման պահանջներից, ուսումնասիրված բոլոր այն դեպքերում, երբ մասնագիտական եզրակացությամբ շենքի տեխնիկական վիճակը գնահատված կլինի առնվազն բավարար և կպահանջվի սեյսմազինվածության բարձրացում,

13. շենքերը պարփակող/պատող կոնստրուկցիաների ջրամեկուսացում, անհրաժեշտության դեպքում՝ դրենաժային համակարգերի իրականացում:

Սույն պարբերությամբ սահմանված միջամտություններն ուղղվում են կարիքների գնահատմամբ համապատասխան բաղադրիչի համար արձանագրված կարիքի վերացմանը, վերանորոգմանը կամ արդիականացմանը:

Սույն բաժնի չորրորդ պարբերությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների կատարման և (կամ) դրանց նկատմամբ իրականացվող վերահսկողության ընթացքում, ինչպես նաև սույն բաժնի երրորդ պարբերությամբ նախատեսված կարիքների գնահատման ընթացքում արձանագրված վնասվածքների դեպքում իրականացվում են ծածկված աշխատանքների/կոնստրուկցիաների/ ստուգման միջոցառումներ, որոնց արդյունքում, անհրաժեշտության դեպքում, առանց շինարարության թույլտվություն ստանալու իրականացվում են սույն բաժնի չորրորդ պարբերության 11-րդ կետով նախատեսված՝ կոնստրուկցիաների պահպանման, քայքայման կանխարգելման համար լուծում պահանջող անհետաձգելի տեղային վերականգնման աշխատանքներ:

Սույն բաժնի հինգերորդ պարբերությամբ նախատեսված աշխատանքների անհրաժեշտությունը և ծավալն արձանագրվում են համապատասխան ակտով՝

մինչև տվյալ աշխատանքի իրականացումը: Ակտը կազմվում է պատվիրատուի և կապալառուի հետ համատեղ՝ ներգրավելով հեղինակային և առկայության դեպքում՝ տեխնիկական հսկողներին, ինչպես նաև շենքի տեխնիկական վիճակի մասին եզրակացությունը տված կազմակերպության ներկայացուցչին:».

2) 2-րդ կետը 1.1-ին ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.2-րդ ենթակետով՝

«1.2) սույն որոշման NN 1 և 3 հավելվածներում ընդգրկված դպրոցների համար նախատեսված կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման կամ վերանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում տեխնիկական հետազննության եզրակացությամբ, ճարտարագիտական ուսումնասիրությունների արդյունքներով կամ սահմանված կարգով մշակված նախագծային փաստաթղթերով հիմնավորված՝ գոյություն ունեցող շենքի կամ շինության ամբողջական կամ մասնակի քանդումը (ապամոնտաժումը), եթե առանց դրա հնարավոր չէ իրականացնել ծրագրով նախատեսված աշխատանքները կամ ապահովել պարտադիր նորմատիվատեխնիկական պահանջների կատարումը, համարվում է սույն որոշմամբ հաստատված ծրագրով նախատեսված աշխատանք:

Եթե սույն ենթակետով նախատեսված ամբողջական կամ մասնակի քանդման (ապամոնտաժման) անհրաժեշտությունը հանգեցնում է համապատասխան հավելվածով տվյալ դպրոցի համար սահմանված շինարարական միջամտության տեսակի փոփոխության, համապատասխան քանդումը (ապամոնտաժումը) և փոփոխված միջամտությանը համապատասխան հետագա աշխատանքներն իրականացվում են ծրագրում համապատասխան փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո:

Սույն ենթակետով նախատեսված՝ N 3 հավելվածում ներառված դպրոցների մասնաշենքերի ամբողջական կամ մասնակի քանդման (ապամոնտաժման) աշխատանքների արդյունքի, ինչպես նաև այդ աշխատանքների իրականացման և դրանց արդյունքում առաջացած շինարարական աղբի տեղափոխման նկատմամբ կիրառվում է սույն կետի 1-ին ենթակետով սահմանված կարգավորումը:

Միաժամանակ, սույն ենթակետով նախատեսված հիմքերով իրականացվող քանդումը (ապամոնտաժումը) համարվում է սույն որոշմամբ հաստատված ծրագրով նախատեսված քանդում, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի հուլիսի 2-ի N 982-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետի համաձայն՝ նույն կարգի դրույթները չեն կիրառվում:».

3) 2-րդ կետի 1.1-ին ենթակետը «բացառությամբ շինարարական աղբի» բառերից հետո լրացնել հետևյալ բառերով՝ «և սույն կետի 1.2-րդ ենթակետով նախատեսված քանդման (ապամոնտաժման) աշխատանքների արդյունքի».

4) N 1 հավելվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկի՝

ա. 48-րդ կետի 5-րդ սյունակի «կառուցում» բառը փոխարինել «վերանորոգում» բառով,

բ. 234-րդ տողը ճանաչել ուժը կորցրած.

5) N 1 հավելվածով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված վերանորոգվող/հիմնանորոգվող դպրոցների ցանկը՝ ներառյալ հաստատության տեսակի, շինարարական աշխատանքների, ինչպես նաև պատվիրատու մարմնի վերաբերյալ տեղեկատվությունը» աղյուսակը 303-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 304-319 կետերով՝

«

304	Երևան	Երևանի Վ. Համբարձումյանի անվան թիվ 12 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	կառուցում			ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
305	Երևան	Երևանի Ջ. Խալափյանի անվան թիվ 156 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	կառուցում			ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
306	Երևան	Երևանի թիվ 136 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	կառուցում			ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
307	Երևան	Երևանի Վ. Թեքեյանի անվան թիվ 92 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	կառուցում			ՀՀ քաղաքաշինության կոմիտե	

308	Արագածոտն	Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	կառուցում			ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
309	Արմավիր	Արմավիրի Մ. Սիլիկյանի անվան թիվ 6 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	կառուցում			ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
310	Արմավիր	Արտիմետի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	կառուցում			ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
311	Արմավիր	Ջանֆիդայի Էդ. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	կառուցում			ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
312	Արմավիր	Շահումյանի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	կառուցում			ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
313	Արմավիր	Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	կառուցում			ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
314	Արմավիր	Փշատավանի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	կառուցում			ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
315	Արմավիր	Մրգաստանի Կ. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	կառուցում			ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
316	Գեղարքունիք	Վերին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	կառուցում			ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
317	Գեղարքունիք	Գագարինի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	կառուցում			ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
318	Լոռի	Ալավերդու թիվ 12 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	կառուցում			ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
319	Շիրակ	Զորակապի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	կառուցում			ՀՀ քաղաքաշինության կոմիտե	

».

6) N 3 հավելվածով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված վերանորոգվող/ հիմնանորոգվող դպրոցների ցանկը՝ ներառյալ հաստատության տեսակի, շինարարական աշխատանքների, ինչպես նաև պատվիրատու մարմնի վերաբերյալ տեղեկատվությունը» աղյուսակը 145-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 146-189 կետերով՝

«

146	Արագածոտն	Ներքին Բազմաբերդի Ե. Ասատրյանի անվան միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	ՀՀ քաղաքաշինության կոմիտե	
147	Արագածոտն	ք. Ապարանի Հ. Ոսկանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	

148	Արագածոտն	ք. Թալինի Մ. Արսլանյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
149	Արագածոտն	ք. Աշտարակի Գր. Ղափանցյանի անվան թիվ 4 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
150	Արմավիր	գ. Թահիրովի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
151	Գեղարքունիք	Հայրավանքի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
152	Գեղարքունիք	«Ծաղկունք բաց դպրոց» հիմնադրամ	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
153	Գեղարքունիք	ք. Մարտունու թիվ 2 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
154	Արարատ	Մխչյանի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
155	Արարատ	Մասիսի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
156	Արմավիր	Դողսի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
157	Արմավիր	Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
158	Կոտայք	ք. Չարենցավանի ԱՀԿ Վազգեն Ա-ի անվան թիվ 3 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
159	Կոտայք	Գեղաշենի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
160	Լոռի	Լերմոնտովոյի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	

161	Սյունիք	Շաղատի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
162	Վայոց Ձոր	Խնձորուտի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
163	Գեղարքունիք	գ. Ջովաբերի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
164	Գեղարքունիք	Գեղամավանի Ա. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
165	Երևան	ք. Երևանի Վ. Մայակովսկու անվան թիվ 7 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
166	Երևան	ք. Երևանի թիվ 105 ավագ դպրոց	ավագ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
167	Լոռի	ք. Վանաձորի Ա. Պուշկինի անվան թիվ 4 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
168	Լոռի	ք. Վանաձորի Ա. Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոց	ավագ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
169	Լոռի	ք. Վանաձորի Ավ. Իսահակյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
170	Լոռի	ք. Վանաձորի Հ. Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
171	Լոռի	գ. Գուգարքի Հ. Շիրազի անվան միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
172	Լոռի	Հաղպատի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
173	Գեղարքունիք	Վահանի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	

174	Արագածոտն	Արտաշավան միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
175	Արագածոտն	գ. Ավանի Ա. Սերոբի անվան միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
176	Արագածոտն	Բերքառատի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
177	Արագածոտն	Նորաշենի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
178	Արագածոտն	գ. Աշնակի Գ. Չաուշի անվան միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
179	Արագածոտն	Արուճի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
180	Արագածոտն	Թաթուլի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
181	Արարատ	Արալեզի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
182	Շիրակ	Նահապետավանի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
183	Վայոց Ձոր	Ելփինի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
184	Արարատ	Արաքսավանի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
185	Արարատ	Ռանչպարի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
186	Շիրակ	Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
187	Երևան	Երևանի թիվ 134 հիմնական դպրոց	հիմնական դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	

188	Արարատ	Դիմիտրովի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	
189	Տավուշ	Այգեձորի միջնակարգ դպրոց	միջնակարգ դպրոց	վերանորոգում/ հիմնանորոգում	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

21.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ